# ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆԻՍՏ՝ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

*Սեպտեմբերի 22-ին լրացավ ՀՀԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր Սարգիս Հարությունյանի ծննդյան 85-ամյակը և գիտամանկավարժական բեղուն գործունեության 60-ամյակը: Այս առիթով ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում հրավիրվել էր գիտխորհրդի նիստ: Գիտնականի հոբելյանը հարմար առիթ հանդիսացավ իր հարազատ ինստիտուտում մեկ անգամ ևս ամփոփելու ու գնահատելու նրա անցած ուղին և գիտամանկավարժական հարուստ գործունեությունը:*

*Նիստը շնորհավորական խոսքով բացեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը: Նա ասաց, որ ինքը ցանկանում է երկար տարիների կյանք ու առողջություն սիրելի ուսուցչապետին, որի հոգեզավակներն են հանդիսանում ինքը և ինստիտուտի ավագ ու միջին սերնդի մասնագետները: Ինստիտուտի փոխտնօրեն Գագիկ Սարգսյանը միջնադարյան յուրահատուկ գեղարվեստական հարդարանքում տեղադրված ուղերձով հանդես եկավ, որն այստեղ ներկայացվում է ամբողջությամբ.*

*ՄԵԾԱՐԳՈ ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ*

Ձեր հարազատ ինստիտուտի ողջ կոլեկտիվը մեծ սիրով ու ակնածանքով շնորհավորում է Ձեզ փառապանծ հոբելյանի՝ ծննդյան 85-ամյակի առթիվ: Մեզ համար մեծ պատիվ է լինել հայագիտության երախտավոր ու անխոնջ մշակ Սարգիս Հարությունյանի ոչ միայն ժամանակակիցը, այլև գործընկերը, որի գիտական անուրանալի վաստակը բոլորիս մոտ հպարտության խորը զգացմունքներ է առաջացնում:

Ձեր գիտական նվաճումները հայագիտության այնպիսի ժողովրդամերձ բնագավառում՝ ինչպիսին հայոց բանագիտությունն է, Ձեզ, իրավամբ, դասում են մեր ժամանակների ոչ միայն հայ, այլև համաշխարհային բանագիտական մտքի երեւելիների շարքը:

Չափազանց լայն է Ձեր գիտական հետաքրքրությունների և պրպտումների շրջանակը. վիպական բանահյուսություն, ի մասնավորի՝ ազգային դյուցազնավեպ, հմայական բանահյուսություն՝ անեծք-օրհնանքներ, աղոթքներ ու երդումներ, առասպելաբանություն, հայ հին գրականություն, հայ ժողովրդական հանելուկներ և ժողովրդական բառ ու բանի այլ բնագավառներ: Ձեր մենագրական և այլ բազմաբնույթ աշխատությունները հայ և օտար մասնագետների համար դարձել են բնագավառի գիտական գրականության առաջին անհրաժեշտության ուսումնասիրություններ, դրանով իսկ համաշխարհային ճանաչում բերել հայկական բանագիտությանը: Մեծ

է Ձեր ավանդը բանագիտության բնագավառում բարձրակարգ մասնագետներ պատրաստելու շնորհակալ գործում: Տասնամյակների Ձեր արգասավոր դասախոսական գործունեությունը, ասպիրանտների ու հայցորդների ատենախոսությունների խիստ արդյունավետ ղեկավարման փորձառությունը՝ մեծապես նպաստել են բազմաթիվ բանագետ կադրերի պատրաստմանը, որոնց համար Դուք անբեկանելի հեղինակություն եք: Այսօր էլ Դուք բազմազբաղ եք և նույն եռանդով շարունակում եք Ձեր արգասաբեր գործունեությունը: Հայցում ենք Աստծո ողորմածությունը Ձեզ պարգևելու քաջառողջություն, ինչը հնար կտար մեզ այսուհետ ևս ըմբոշխնելու Ձեր ներկայությունը, ականատես և ականջալուր լինելու Ձեր իմաստալից մտքերին ու խորհուրդներին ու նոր քերթվածքներին:

Մեծագույն հարգանքներով
ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության
ինստիտուտի տնօրինություն

*Հոբելյարին շնորհավորեց և ջերմ գնահատականի խոսքերով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնի առաջատար գիտաշխատող Վերժինե Սվազլյանը: Նա ամփոփեց գիտնականի վեց տասնյակ տարիների գիտական և գիտամանկավարժական գործունեության անցած ուղին, նրա կյանքն ու գործը, ապա մաղթեց «երախտաշատ գիտնականին» ստեղծագործական նորանոր հաջողություններ, ծրագրերի և մտահղացումների իրականացում:*

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արդիական ազգագրության բաժնի վարիչ Լևոն Աբրահամյանը նույնպես հանդես եկավ ողջույնի ջերմ խոսքով: Արժևորելով հոբելյարի*

*վաստակն ու նրա մեծ ավանդը դասական հայագիտության մեջ՝ նա ցանկություն հայտնեց, որ Հայաստանում վերահրատարակվի Ս. Հարությունյանի կոթողային գրքերից «Հայ առասպելաբանությունը» , որը մեծ պահանջարկ է վայելում ուսանողության շրջանում և, եթե հնարավոր է, այն թարգմանվի ռուսերեն կամ անգլերեն:*

*Ելույթ ունեցան և հոբելյարին շնորհավորանքի ու մեծարման խոսքեր փոխանցեցին բ. գ. դ. Ա. Պետրոսյանը, ով նշեց, որ եթե Ս. Հարությունյանը բանագետ չդառնար, ապա իր ողջ կարողությունները կդրսևորեր արվեստագիտության, մասնավորապես, կինոյի կամ թատերական ռեժիսուրայի բնագավառներում:*

*Հնագետ Ժորես Խաչատրյանը, ծանոթ լինելով Ս. Հարությունյանի հորը՝ Բարդուղիմեոս Հարությունյանին, նրա իմաստությանը և բարեպաշտությանը, նշեց, որ պատահական չէ և որդու մեծակշիռ ավանդը հայագիտության և, մասնավորապես, բանագիտության բնագավառներում, քանի որ Ս. Հարությունյանը հզոր հայեցի արմատներից է սնվել:*

Մի պահ պարգևատրության արարողությունից

*Հանդես եկան նաև բ. գ. թ. Սվետլանա Վարդանյանը, բ. գ. թ., բանահյուսական տեքստաբանության բաժնի վարիչ Թամար Հայրապետյանը, պարագետ Ժենյա Խաչատրյանը, Երևանի պետական համալսարանի իրանագիտության ամբիոնի դասախոս Վիկտորյա Առաքելովան:*

*Բոլոր ելույթ ունեցողների խոսքը տոգորված էր հոբելյարի նկատմամբ ջերմ սիրով ու խորին հարգանքով, նրա մարդկային և գիտական արժանիքների բարձր գնահատման անկեղծ հիացմունքով:*

*Վերջում Սարգիս Հարությունյանն իր շնորհակալությունը հայտնեց բոլորին, ինչպես միշտ կենդանի ժողովրդական իմաստությամբ, բառ ու բանով հագեցած խոսքով ասաց, որ իրեն ի վերուստ տրված շնորհը անմնացորդ նվիրել է իր ժողովրդին:*

*Հաղորդումը պատրաստելիս հայտնի դարձավ, որ Սարգիս Հարությունյանը արժանացել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի պարգևին՝ Մովսես Խորենացի մեդալին՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակի կապակցությամբ, գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար» :*

ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ